Գնաճ շահարկելիս չի շահում ոչ ոք, կորցնում են բոլորը

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Փոթորիկ ոչ մի բանից Մեծ Բրիտանիայում

Միացյալ թագավորության բենզալցակայաններում այս օրերին հսկայական հերթեր են գոյացել: Ոստիկանությունը մտահոգ է երկրով մեկ առաջացող մեծ խցանումներով, կառավարությունը մտածում է ծավալվող սոցիալական դժգոհությունը կանխելու ճանապարհների մասին, անգամ առաջարկներ կան զորք մոբիլիզացելու մասին, վարորդները մեկ հոգս ունեն այս օրերին՝ ամբողջությամբ լցնել բենզաբակը, որպեսզի կարողանան դիմակայել բենզինի դեֆիցիտին: Դեֆիցիտ, որն իրականում չկա:

Այո, այս խառնաշփոթ իրավիճակում բենզինի դեֆիցիտ Մեծ Բրիտանիայում իսկապես չկա, փոխարենը կա խուճապ: Իսկ ի՞նչ է տեղի ունեցել իրականում: Կորոնավիրուսային համաճարակով պայմանավորված՝ պակասել էին արևելաեվրոպական երկրներից Բրիտանիա ժամանող բեռնատարների վարորդների թվաքանակը, նվազել էին երթևեկող բեռնատարները, ինչի արդյունքում «Բրիթիշ Փետրոլիումը», արդյունավետության նկատառումներից ելնելով, հայտարարեց մի քանի բենզալցակայաններ փակելու մասին: Փակված լցակայանները մամուլի էջերում դարձան բենզինի դեֆիցիտի խորհրդանիշներ, և խուճապը ծավալվեց՝ ինքն իրենից թափ հավաքելով: Տեղային փոքր խնդիրն օրերի ընթացքում վերաճեց համազգային մեծ հարցի: Երբ տեղեկատվական հոսքի ազդեցության տակ բոլորը միաժամանակ ցանկանում են գնել նույն բանը, ոչ մի համակարգ չի հասցնի սպասարկել նման պահանջարկը:

Ու այսօր Մեծ Բրիտանիան պայքարում է չեղած խնդրի իրական հետևանքների դեմ: Խնդիր, որն առաջացավ կեղծ ուղերձ տարածելով:

Գնաճը լոքդաունին ու պատերազին հաջորդող շրջանում

Հայաստանի տնտեսությունն ավելի քան մեկ ու կես տարի սառեցված՝ ոչ բնականոն վիճակում է եղել: Հետևաբար ներկա փուլը մեծապես իր վրա կրում է մարդկանց ու կազմակերպությունների հետաձգված ծրագրերի կուտակային ազդեցությունները: «Շինանյութը ահավոր թանկացել է», «Հարսանիքի սրահներում էս ի՞նչ գներ են». նմանօրինակ արտահայտություններ բոլորս ենք լսել ու լսում վերջին ամիսների ընթացքում: Եվ դրանք ճշմարիտ դիտարկումներ են: Պատճառն էլ հասկանալի է. մարդիկ մեկ տարուց ավելի հետաձգել են տուն կառուցապատելու ու վերանորոգելու իրենց ծրագրերը, հետաձգել են հարսանիք, ծնունդ, կնունք և այլ միջոցառումներ, իսկ հիմա փաստացիորեն միաժամանակ իրականացվում են երկու տարվա բնականոն որոշումներ: Դրանք «իրար գլխի են հավաքվել», մեծացել է պահանջարկը, առաջարկը հետ է մնացել պահանջարկից, գներն աճել են: Դասական՝ տնտեսագիտորեն բացատրվող իրավիճակ: Ինչ կլինի հետո՞. հետո ամեն ինչ հետ կգա իր բնական վիճակին և այլ հավասար պայմաններում եկող տարի գների տրամաբանությունը կմտնի բնականոն հուն:

Միևնույն ժամանակ Հայաստանի տնտեսությունն արտաքին հատվածից է ներկայում կրում գնաճային ազդեցություն, քանի որ մեր գործընկեր երկրներում գնաճն ընթանում է նախկին կանխատեսումների համեմատ ավելի բարձր հունով: Հետևաբար թե՛ արտաքին հատվածից և թե՛ ներքին տնտեսությունից շարունակում են պահպանվել հիմնականում գնաճային ազդեցությունները, ինչի հետևաքով գնաճը Հայաստանում գտնվում է ծրագրայինից բարձր մակարդակում:

Արդյունքում, 2021թ. օգոստոսին արձանագրվել է 0.4% գնաճ՝ նախորդ տարվա նույն ամսվա 0.1% գնանկման դիմաց, որի պարագայում 12-ամսյա գնաճը շարունակել է ավելանալ և ամսվա վերջին կազմել է 8.8%, իսկ 12-ամսյա բնականոն գնաճն օգոստոսին ևս պահպանվել է 8.0%-ի շրջակայքում: Հիշեցնենք, որ մեր երկրում տարեկան գնաճի նպատակային միջակայքը «+/-» 4%-ն է:

«Բզբզա՞լ», թե սպասել գնաճն իջնի

Մեծ Բիրտանիայում բենզինի խնդիր չկա, բայց մամուլն ու հասարակությունը ձեռք-ձեռքի տված այս օրերին խուճապ են ստեղծել ու հսկա հերթեր ստացել: Նույն ժամանակ Հայաստանում ինֆլյացիան բարձր է սովորական մակարդակից: Մենք՝ որպես հասարակություն, որպես մամուլի մի-

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

ջոցներ կամ ազդեցություն ունեցող հանրային ու քաղաքական գործիչներ, կարող ենք երկու բան անել.

1. կա՛մ մեծ աղմուկ բարձրացել, որ գներն աճում են և անխուսափելիորեն ստանալ տրամաբանականից ավել գնաճ,
2. կա՛մ ընկալել ինչու է բարձր գնաճն ու սպասել, մինչև իջնի, ինչը կանխատեսումներով կլինի մի քանի ամսից սկսած:

Ինֆլյացիան կամ գնաճը վատ բան է. թշնամի է: Այն վնասում է թե՛ ողջ տնտեսությանը, թե՛ յուրաքանչյուր ընտանիքին: Յուրաքանչյուր ոք, ով ընտրում է վերոնշյալ երկու կետերից առաջինը, ապա անխուսաելիորեն վնասում է իրեն ու իր ընտանիքին, իսկ թե ինչ է շահում՝ խիստ հարաբերական է: Առողջ տրամաբանությունն ընտրում է երկրորդ կետը: Ու այդ ընտրության մեջ, բացի դրա լոգիկ լինելուց, մի էլեմենտ էլ կա. գնաճը Հայաստանում կառավարում է Կենտրոնական բանկը, իսկ այն տարիներ շարունակ ակնառու ապացուցել է, որ հազվագյուտ ուժեղ ու պրոֆեսիոնալ կառույց է ու արժանի է, որ իրեն վստահեն բոլորը:

Համառոտագիրը մշակվել է 2021թ. սեպտեմբերի 10-ին կայացած՝ «ՀՀ ԿԲ դրամավարկային և ֆինանսական կայունությանը միտված քաղաքականությունների առաջնահերթություններ» խորագրով առանց հողումների իրավունքի քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ և քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

Միջոցառումն իրականացվել է «Աջակցություն դրամավարկային ու ֆինանսական հատվածի հաղորդակցության ռազմավարությանը» ծրագրի շրջանակներում: